ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/166

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 24.07.2020թ. թիվ 26/26-1/11118-2020 գրությամբ «Էկոմֆորթ Բիլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 21.07.2020թ. թիվ 01/61-12872 գրության հիման վրա, 24.07.2020թ. թիվ 26/26-1/11118-2020 գրությամբ նախաձեռնել է «Էկոմֆորթ Բիլդինգ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էկոմֆորթ Բիլդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էկոմֆորթ Բիլդինգ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«Էկոմֆորթ Բիլդինգ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/166 ընթացակարգի շրջանակներում 31.07.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.07.2020թ. թիվ 01/61-12872 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Էկոմֆորթ Բիլդինգ» ՍՊԸ-ի միջև 21.02.2020թ. կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/6 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի փողոցներում բետոնե արգելապատնեշների տեղադրման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պատվիրատուն հայտնել է, որ նշված պայմանագրով աշխատանքների հանձնման վերջնաժամկետ էր սահմանվել՝ 30.06.2020 թվականը:

Նշված պայմանագրի շրջանակներում Ընկերությունը պայմանագրով նախատեսված 7 740 000 ՀՀ դրամի փոխարեն կատարել է 438 790 ՀՀ դրամի չափով աշխատանքներ:

Պատվիրատուն վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասը, 408-րդ հոդվածը, 466-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը, Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվել է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթը:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն առաջարկել է, վերը նշված իրավական հիմքերով պայմանավորված նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերությամբ, Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/166 ընթացակարգի շրջանակներում 31.07.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/166 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/166 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Էկոմֆորթ Բիլդինգ» ՍՊԸ-ի միջև 21.02.2020թ. կնքվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/6» ծածկագրով աշխատանքների կատարման գնման պայմանագիր:

2. Պատվիրատուի կողմից 22.07.2020թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

3. Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 21.07.2020թ.՝ թիվ 01/61-12872 գրությամբ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 24.07.2020թ. թիվ 26/26-1/11118-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 21.07.2020թ. թիվ 01/61-12872 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Երևանի քաղաքապետարանի և «Էկոմֆորթ Բիլդինգ» ՍՊԸ-ի միջև 21.02.2020թ. կնքվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/6» ծածկագրով աշխատանքների կատարման գնման պայմանագիր:

Պատվիրատուի կողմից ***<u>22.07.2020թ.</u> տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:***

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, ***Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է <u>21.07.2020թ.</u>՝ թիվ 01/61-12872 գրությամբ***:

Այսպիսով՝ Պայմանագրի 8-րդ կետի 8.11-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: ***Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ <u>ծանուցումը,</u> սույն կետով սահմանված <u>հրապարակվելուն հաջորդող օրվանից</u>:***

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: ***Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում <u>հրապարակվելուն հաջորդող օրվանից:</u>*** Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ արձանագրում եմ, որ «Էկոմֆորթ Բիլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից, երբ Պայմանագիր կնքած անձը համարվել է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, այսինքն՝ 23.07.2020թ.-ից: Սակայն Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան փաստաթղթերով, թիվ 01/61-12872 գրությամբ ուղարկել է լիազորված մարմնին 21.07.2020թ., վերջինս էլ նախաձեռնել է «Էկոմֆորթ Բիլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ՝ առանց իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ի հայտ եկած հիմքի:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել նաև հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի մասնակիցների գործողությունների հաջորդականությունը՝ հստակ ժամկետներով:

Ընդ որում՝ համապատասխան ընթացակարգային ժամկետի սահմանումը չի կարող ինքնանպատակ լինել. տվյալ ընթացակարգային ժամկետի սկիզբը իրավաստեղծ մարմինը կապել է որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հետ, և հետևաբար ցանկացած ընթացակարգ, որը կնախաձեռնվի դեռևս տվյալ ընթացակարգային ժամկետի հոսքը պայմանավորող փաստի ի հայտ չեկած լինելու պայմաններում, ինքնին ազդում է ամբողջ ընթացակարգի իրավաչափության վրա՝ անկախ այն հանգամանքից, թե հետագայում՝ ընթացակարգը նախաձեռնելուց հետո ինչպիսի հանգամանքներ կարող են ի հայտ գալ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վերոնշյալ իրավակարգավորման համատեքստում, նաև անդրադառնալով Կարգի 45-րդ կետով և 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված ընթացակարգային ժամկետի պահպանման և ժամկետի հոսքի սկիզբը ճիշտ հաշվարկելու իրավաստեղծ մարմնի նպատակին, հարկ է արձանագրել, որ այն չի կարող ինքնանպատակ լինել, քանզի ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, ում հետ կնքված պայմանագրի լուծման հետևանքով պայմանագրի մյուս կողմը հիմքերը կարող է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար, ունի լեգիտիմ ակնկալիք առ այն, որ այդպիսի գործընթաց չի նախաձեռնվի իր նկատմամբ այնքան ժամանակ, քանի դեռ ինքը պատշաճ չի ծանուցվել պայմանագրի միակողմանի լուծման մասին:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Էկոմֆորթ Բիլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 24.07.2020թ. թիվ 26/26-1/11118-2020 գրությամբ «Էկոմֆորթ Բիլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**